հարուածներին։ Բայց վատ բնաւորութիւնը կրկին իշխող հանգիստ-ցաւ նորա մէջ, և նա նորոգեց իւր կոպտութիւնները և անիրաւութիւնները։ Ոչ մի վերանորոգութիւն չնկատելով Ցիցեանով իշխանը, Կովկասի պատմութեան մէջ նշանաւոր անունը, 1805 թվին զօրք ուղարկեց Բագու և հրամայեց պաշարել քաղաքը, բայց պաշարումը յաջող չանցաւ, որովհետեւ Բագուին օգնելու ժամանակ երեւան եկան Դերբէնդի նենգաւոր Շէյխ Ալի խանը և Սուրխայ Ղաղի Ղումուխցին։ Ռուսաց զօրքը հեռացաւ, բայց իշխան Ցիցիանովի հրամանով կրկին պաշարուեց Բագուն, իսկ շուտով ինքը իշխանն էլ միացաւ զօրքին։ Նենգաւոր Հիւսէյին Ղուլի խանը խնդրեց յատուկ տեսակցութիւն գլխաւոր հրամանատարի (Ցիցիանովի) հետ քաղաքի պարսպի մօտ որպէս զի՝ յանձնի քաղաքի բանալիները. մեծահոգի Ցիցիանովը ներկայացաւ նշանակած տեղը և նենգաւոր կերպով սպանուեցաւ, 1806 թ. փետր. 6ին. իւր մահուանից առաջ հերոսը ներումն գրեց իւր սպանողին։

Նոյն թուին Հիւսէյին Ղուլի խանը հեռացաւ իւր ընտանիքի և մերձաւորների հետ պարսից գլխաւոր բանակը Սալեանի մօտ. իսկ գեներալ Բուլգակովը վերցրեց Բագուն և ընդ միշտ միացրեց Ռուսաց տիրապետութեան հետ։

Վերջին պարսկական պատերազմի ժամանակ Բագուն, սահմանակից լինելով Պարսկաստանին, պաշարուած էր 1826 թ. պարսից 2000 աչափ զօրքով. իսկ ծովի կողմից պարսից նաւերը կտրեցին քաղաքի յարաբերութիւնները միւս տեղերի հետ, բայց նոյեմբերին պարսից զօրքերը հեռացան և Բագուն ազատուեց ռմբակոծութիւնից։

Բագուայ Հիւսէյին Ղուլի նախկին խանը զուր էր աշխատում կապեր հաստատել Բագուում և լեզգիներին ապստամբեցնել ընդդէմ Ռուսաց։ Նա զրկուած լինելով ամեն մի յոյսից, ստիպուած հեռացաւ Պարսկաստան։

Ցեր. 11—Բագու անուան յառաջ գալը ինչպէս կարծւում է պէտք է յառաջ եկած լինի յաճախ տեղի ունեցող քամիներից, որ հաստատուել է պարսիկների մէջ բազքուբէ, այսինքն քամիների ժողովածու։

Ցեր. 17—Շահի պալատի ձախ կողմում գտնվում է մի ուրիշ